

պատուելի եղբայրութեան քում, կրկին ոչ յունիմ ժամանակ. եթէ կամի աստուած բերան առ բերան խօսիլ, յայնժամ ընանի փափաք և իղձ սրտիս: Խնդրեմ զի ծանուցես երէմիեա վարդապետին շուտով յղեսցէ իւր եղբօր որդին, եթէ հաճի ինքն բերցէ. զի յետ իմոյ ելանելոյ ոչ կարէ մտանել մանուկն ի Գպրատուն, իսկ յաժմ աստուծով աներկբայ մտանէ. վաղեմի սիր[ել]ին իմ պարոն յովանէսն, աղաչայ պետրոսն, համեստ ընկ[եր]ան և նիբօթիւն, և եւս մերայինքն զսուրբ աջգ համբուրեն: Վերջեմ զբանս ժտելով յատուկ յիշել զտառապետիս ի սուրբ յաղօթս որպէս զմի ի թշնամեաց. որչ լեր ի փարծանս սրբոյ եկեղեցոյ. մնամ

1742

Գեկտեմբերի 22
[ի Հոովմ]

Պատրաստ ծառայ
Ամենապատուելի Եղբայրութեանդ
հուաստ
Պետրոս Կաթողիկոս Հայոց
Հաստատեալ ի սրբոյ Գահէն

ՃԺԴ.

Թէ՛ լեզուին և թէ՛ պարունակուած այլազան նիւթերուն համար շահեկանութիւն մ'ունի հետեւեալ վաւերագիրը:

Նամակագիրն է Պետրոս Քէլիեան. այն անձն է՝ որ նախընթաց մէկ քանի նամակներու մէջ յիշուած է Աղաչայ Պետրոս անուամբ:

Օրհնեալ եղիցի Յիսուս Քրիստոս. 1742. դեկտեմ. 22. ի մեծն Հոովայէ

Գեր Յարգել Հօրն մերոյ հայրաբբային. և ամենայն միեաբանից խոնարհական սիրոյ ողջուն. անարժան ծառայէտ պետրոսէն

... Վեհայուստ Կաթողիկոսն մեր, որ մեծ շատ առժանաւոր մարդ է, ոչ կասիմ առանել քանծ զգերայբարձրութիւնս. ալ թէ ընդ կարքաւորաց մեր հայոց. շատ զօլի և խոնար ու պարկեշդ մարդ մնէ. և շատ զուհ է և զօվասանութեամբ է ամենից մեծաւորաց և կարքաւորաց. նայև ինքն նմանայպէս շատ զուհ է ի վերայ գերայբարձրութեանս և շատ մեծ սէր ունի զալու և տեսնելու զգերայբարձրութիւնս և միշտ ուրախ է ի վերայ ձեր ամենից միեայբանից: Եւ ամենայն ժամ կու հիշէ զհրամանքներս. դարձեալ հօս մեծ սիրով ըզսայ կի ընդունէ սրբազան Փափն և ամենայն կարտինալք որ և ես մեղաւորս ալ երկու անգամ մինչև ցածմ էղիլ իմ փափին տունը և զոտն համբուրիլ իմ միջնորդութեամբ Վեհայուսդ Կաթողիկոսին. և հետն միայտեղ էղիլ իմ փափին մօտ. նայև հարկ եղև որ խօսիմ հետ սրբազան փափին լազիննակն, ծուռումուռ որպէս զիտաձայ. վերչայպէս օրհնութիւն երկու անգամ և եղ զձեռն զլիսուս և զոտն համբուրեցի քանիցս անգամ և փառօք ուրախութեամբ ելինք և փափին կառօքն զմեզ մեր օթեան բերին. և զայս ևս ասաց սրբազան փափն թէ ուրախ է և ունի շատ սէր ի վերայ մեր ողորմելի ասգին . . . :

Պ[ետրոս] Քէլիեան

P. S. Պի գրիմ քիչ մն նոր խապար Գեր Յարգելութեանս. թէօր սուտ չիլայ նայ առաչին ըզլաւ խապարն. այսինքն թէ բրինձ. Լուբգօվիձը. ես գիտեմ զինքըն. նայ կասին թէ շատ հախթութիւն արած ըլլայ և գտնըված ըլլայ Ֆրանձուզնուն մօտ են զամենայն